

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՍԱՆ ԾՐԱԳԻՐ

ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ՝ ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ

ՎԶՄԲ ՎԱՐԿ 8267-AM

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող
տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Մարտ 2017թ.

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....	6
ՖՈՆԴԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	7
ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ...	8
ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	9
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	10
ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	11
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ.....	17



"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ

"SOS-AUDIT" LTD

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Ջրային Տնտեսության Ծրագրերի Իրականացման Գրասենյակ Պետական Հիմնարկի (ՋՏԻԳ ՊՀ) ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել 2013թ. մայիսի 29-ին կնքված ՎՁՄԲ 8267-AM Վարկային համաձայնագրով (Վարկային համաձայնագիր) ֆինանսավորվող և ՋՏԻԳ ՊՀ-ի կողմից իրականացվող «Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի» (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆոնդերի աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, ըստ Ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, վարկային միջոցների առհանումների մասին հաշվետվությունը, նպատակային հաշվի հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով՝

1. Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ծրագրի ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆոնդերի ստացումները և օգտագործումը՝ համաձայն սույն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից 2-րդ ծանոթագրությունում ներկայացված հաշվապահական հաշվառման հիմունքի,
2. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎՁՄԲ) միջև կնքված Վարկային համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են,
3. Փոխհատուցման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն Վարկային համաձայնագրի: ՋՏԻԳ ՊՀ-ի կողմից ներկայացված Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները (ՄՖՆ-ներ) համապատասխանում են հաշվապահական համապատասխան գրանցումներին,
4. Նպատակային հաշիվը վարվել է համաձայն Վարկային համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների,
5. Ֆինանսավորվող աշխատանքները, ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել համաձայն Վարկային համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:



"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ

"SOS-AUDIT" LTD

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:

Մենք անկախ ենք Ծրագրից և ՋՏԻԳ ՊՀ-ից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – Ծրագրի իրականացման ձգձգում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրության 4.1 կետին, որում ներկայացված են Ծրագրի իրականացման ձգձգումները և ՋՏԻԳ ՊՀ-ի ղեկավարության կողմից ձեռնարկված միջոցառումները:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

ՋՏԻԳ ՊՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն սույն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից 2-րդ ծանոթագրությունում ներկայացված հաշվապահական հաշվառման հիմունքի: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ, որոնք գերծ են խարդախության կամ սխալի արդյունքում առաջացած էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանք՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:



"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ

"SOS-AUDIT" LTD

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:


Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը,
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

“ՍՕՍ-Աուդիտ” ՍՊԸ

31 մարտի, 2017թ.



Մանվել Ղազարյան
Տնօրեն

Նազիկ Զիթյան
Աուդիտոր

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՍԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր
ՎԶՄՔ վարկ 8267- AM
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	ծնք.	31.12.2016 ԱՄՆ դոլար	31.12.2015 ԱՄՆ դոլար
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ			
Նպատակային հաշիվ ՎԶՄՔ վարկ (ԱՄՆ դոլար)		2,957,732.57	2,244,686.49
Տեղական արժույթի հաշիվ - ՀՀ Կառավարություն (ՀՀ դրամ)		-	646,998.62
Ընդամենը դրամական միջոցներ		2,957,732.57	2,891,685.11
Կանխավճարներ			
Կանխավճարներ	4	1,667,660.94	1,832,404.32
Ծրագրի աճողական ծախսեր	3	26,981,940.47	15,423,070.27
Արտարժույթային վնաս	7	121,419.37	122,652.08
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		31,728,753.35	20,269,811.78
ՖՈՆԴԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կրեդիտորական պարտքեր			
Կրեդիտորական պարտքեր	5	340,546.45	360,951.05
Ֆոնդեր			
ՎԶՄՔ վարկ 8267- AM	6.1	25,683,632.05	15,839,698.34
ՀՀ Կառավարություն	6.2	5,704,574.85	4,069,162.39
Ընդամենը ֆոնդեր		31,388,206.90	19,908,860.73
ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		31,728,753.35	20,269,811.78

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի ղեկավարության կողմից 2017թ. մարտի 31-ին: Կից ծանոթագրությունները հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Ֆելիքս Մելիքյան
Փոխտնօրեն

[Signature]

Աշխեն Զանգուղազյան
Ֆինանսական ղեկավար

[Signature]



ՖՈՆԴԵՐԻ ԱՂԵՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր
ՎԶՄԲ վարկ 8267- AM
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*

ԱՄՆ դոլար

	Փաստացի		Նախատեսված		Շեղում		ԾԳՓ
	Հաշվետու տարի 2016	Անդրական 31.12.2016թ. դրությամբ	Հաշվետու տարի 2016	Անդրական 31.12.2016թ. դրությամբ	Հաշվետու տարի 2016	Անդրական 31.12.2016թ. դրությամբ	
Սկզբնական շրջանառու կապիտալ							
Դրամական միջոցներ	2,891,685.11	-					
Կանխավճարներ	1,832,404.32	-					
Կրեդիտորական պարտքեր	(360,951.05)	-					
Ընդամենը	4,363,138.38	-					
Ֆոնդերի աղբյուրներ							
ՎԶՄԲ վարկ 8267- AM	9,843,933.71	25,683,632.05	5,583,650.00	22,227,560.00	4,260,283.71	3,456,072.05	30,000,000.00
ՀՀ Կառավարություն	1,635,412.46	5,704,574.85	2,547,120.00	8,458,310.00	(911,707.54)	(2,753,735.15)	7,500,000.00
Ընդամենը	11,479,346.17	31,388,206.90	8,130,770.00	30,685,870.00	3,348,576.17	702,336.90	37,500,000.00
Փոխարժեքային օգուտ/(վնաս)	1,232.71	(121,419.37)					
Ֆոնդերի օգտագործում							
1. Ծրագրի համար նախատեսված ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդավական բնույթի ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր	11,558,870.20	26,906,940.47	8,130,770.00	30,610,870.00	3,428,100.20	(3,703,929.53)	37,425,000.00
2. Ծրագրի նախնական վճար	-	75,000.00	-	75,000.00	-	-	75,000.00
Ընդամենը	11,558,870.20	26,981,940.47	8,130,770.00	30,685,870.00	3,428,100.20	(3,703,929.53)	37,500,000.00
Վերջնական շրջանառու կապիտալ							
Դրամական միջոցներ	2,957,732.57	2,957,732.57					
Կանխավճարներ	1,667,660.94	1,667,660.94					
Կրեդիտորական պարտքեր	(340,546.45)	(340,546.45)					
Ընդամենը	4,284,847.06	4,284,847.06					

*«Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր»
Հաստիկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*

ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՎԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր
 ՎՋՄՔ վարկ 8267- AM
 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ
 ԱՄՆ դոլար

Ծրագրի բաղադրիչներ	Փաստացի		Նախատեսված		Ընդամենը		ԾԳՓ
	Հաշվետու տարի 2016	Անդրադրված 31.12.2016թ. դրությամբ	Հաշվետու տարի 2016	Անդրադրված 31.12.2016թ. դրությամբ	Հաշվետու տարի 2016	Անդրադրված 31.12.2016թ. դրությամբ	
Մաս 1. Ոռոգման համակարգի բարելավում	11,021,306.90	23,797,483.09	7,602,090.00	25,616,400.00	3,419,216.90	(1,818,916.91)	33,100,000.00
1.1. Մեխանիկական ոռոգման փոխարկումը ինքնահոսի	9,461,554.81	17,039,836.19	6,434,670.00	21,852,350.00	3,026,884.81	(4,812,513.81)	24,700,000.00
1.2. Մեխանիկական եղանակով ստացած ջուր տեղափոխող և այլ ջրանցքների վիճակի բարելավում	1,559,752.09	6,757,646.90	1,167,420.00	3,764,050.00	392,332.09	2,993,596.90	8,400,000.00
Մաս 2. Կառավարման տեղեկատվություն	60,517.84	876,230.00	16,330.00	2,120,960.00	44,187.84	(1,244,730.00)	1,700,000.00
2.1. Տեխնիկական ուսումնասիրությունների իրականացում	60,517.84	60,517.84	16,330.00	954,910.00	44,187.84	(894,392.16)	900,000.00
2.2. Կարգավարական հսկողության և տվյալների ձեռքբերման համակարգի (SCADA) տեղադրում	-	815,712.16	-	1,166,050.00	-	(350,337.84)	800,000.00
Մաս 3. Ծրագրի կառավարում և ՋՕԸ-ների աջակցություն	477,045.46	2,233,227.38	512,350.00	2,873,510.00	(35,304.54)	(640,282.62)	2,700,000.00
3.1. Ծրագրի կառավարում	440,468.30	1,923,272.91	499,870.00	2,394,550.00	(59,401.70)	(471,277.09)	1,500,000.00
3.2. Աջակցություն ՋՕԸ-ներին	36,577.16	309,954.47	12,480.00	478,960.00	24,097.16	(169,005.53)	1,200,000.00
3.2.1 Աջակցություն ՋՕԸ-ների անձնակազմին	36,577.16	68,312.30	-	-	36,577.16	68,312.30	800,000.00
3.2.2 ՋՕԸ-ների գործադիր մարմինների զարգացում	-	197,981.82	3,980.00	265,530.00	(3,980.00)	(67,548.18)	240,000.00
3.2.3 Տեղեկացվածության բարձրացում	-	43,660.35	8,500.00	213,430.00	(8,500.00)	(169,769.65)	160,000.00
Ծրագրային ծախսեր	11,558,870.20	26,906,940.47	8,130,770.00	30,610,870.00	3,428,100.20	(3,703,929.53)	37,500,000.00
Ծրագրի մակսիմալ վճար	-	75,000.00	-	75,000.00	-	-	-
Ընդամենը ծրագրային ծախսեր	11,558,870.20	26,981,940.47	8,130,770.00	30,685,870.00	3,428,100.20	(3,703,929.53)	37,500,000.00

«Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր»
 Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ
 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

**ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(SOE & SUMMARY SHEET)**

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր
ՎՋՄԲ վարկ 8267- AM
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

ԱՄՆ դոլար

Դիմումի համար	Դիմումի հաստատման ամսաթիվ	1.Ծրագրի համար նախատեսված ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական բնույթի ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր	Ընդամենը
12	26.01.2016	2,755,313.51	2,755,313.51
13	19.04.2016	2,903,340.00	2,903,340.00
14	14.07.2016	1,368,583.30	1,368,583.30
15	04.10.2016	2,816,696.90	2,816,696.90
Ընդամենը		9,843,933.71	9,843,933.71

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր
ՎՋՄՔ վարկ 8267- AM
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

Նպատակային հաշիվ	ՎՋՄՔ Վարկ 8267-AM
Արժույթ	ԱՄՆ դոլար
Հաշվարկային հաշիվ	900000906132
Բանկ	Կենտրոնական գանձապետարան
	Մելիք Ադամյան 1, Երևան,
	Հայաստանի Հանրապետություն
	0010
Հասցե	
	2016
	ԱՄՆ դոլար
1. Սկզբնական մնացորդը	2,244,686.49
Ավելացում	
2. Սկզբնական անհամապատասխանություն	-
3. ՎՋՄՔ ֆոնդի կանխավճար/համալրում	9,843,933.71
Նվազեցում	
4. Նպատակային հաշվից մարում ՎՋՄՔ-ին	-
5. Նպատակային հաշվին համալրված գումարի ներկա մնացորդը	12,088,620.20
6. Նպատակային հաշվի վերջնական մնացորդը 31.12.2016թ. դրությամբ	2,957,732.57
Ավելացում	
7. Վճարված ընդունելի ծախսումներ	9,130,887.63
8. Ծառայությունների վճարներ (եթե դեբետագրվել են նպատակային հաշվին)	-
Նվազեցում	
9. Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշվին)	-
10. Ընդամենը հաշվարկված կանխավճար/համալրում	12,088,620.20
11. Տարբերություն (5)-(10)	-

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր
ՎՋՄԲ վարկ 8267- AM
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագրի ֆինանսավորում

2013թ. մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎՋՄԲ) միջև կնքվել է համաձայնագիր, համաձայն որի ՎՋՄԲ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել 30,000,000 ԱՄՆ դոլար գումարով 8267-AM վարկ «Ոռոգման համակարգերի բարելավման» ծրագրի ֆինանսավորման նպատակով:

Ծրագրի ֆինանսավորման համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2013թ. հուլիսի 15-ին: Վարկային համաձայնագրով ծախսերի կատարման ավարտը սահմանված է 2017թ. հունիսի 30-ին: Առհանումների դիմումների ներկայացման ժամկետը սահմանված է Ծրագրի ավարտից չորս ամիս հետո՝ մինչև 2017թ. հոկտեմբերի 30-ը:

1.2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակներն են՝

- ա) կրճատել էլեկտրաէներգիայի սպառումը և բարելավել ոռոգման ջրի տեղափոխման արդյունավետությունը ընտրված ոռոգման համակարգերում,
- բ) բարելավել ոլորտին առնչվող կարևոր տեղեկատվության առկայությունը և հուսալիությունը՝ որոշում կայացնողների և այլ շահագրգիռ կողմերի համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- Ա - Ոռոգման համակարգի բարելավում,
- Բ - Կառավարման տեղեկատվություն,
- Գ - Ծրագրի կառավարում և ՋՕԸ-ների աջակցություն:

1.3. Ծրագրի բյուջեն

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

- Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկ (ՎՋՄԲ),
- Հայաստանի Հանրապետության Կառավարություն (ՀՀ Կառավարություն):

Համաֆինանսավորման 20% տոկոսադրույք է գործում Ծրագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ոչ խորհրդատվական բնույթի ծառայությունների, խորհրդատուների ծառայությունների, ուսուցման և գործառնական ծախսերի համար:

Կատեգորիա	ՎՁՄԲ 8267-AM	ՀՀ Կառավարություն	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
1. Ծրագրի համար նախատեսված ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական բնույթի ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր	29,925,000	7,500,000	37,425,000
2. Ծրագրի նախնական վճար	75,000	-	75,000
Ընդամենը	30,000,000	7,500,000	37,500,000

1.4. Ծրագրի իրականացում

Ծրագիրը իրականացվում է «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի (ՋՏԾԻԳ) կողմից:

ՋՏԾԻԳ-ի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0033, Բաղրամյան փ. 75/44:

2. Հաշվապահական հաշվառում

2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ըստ հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի և ներկայացվել են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (մարտ 2010)՝ «RM 3 - Ֆինանսական հաշվետվողականություն և Աուդիտ»-ի համաձայն:

Համաձայն հաշվապահական հաշվառման հաշվեգրման մեթոդի՝ ծախսերը ճանաչվում են գործառնությունների կատարման պահին և ոչ միայն դրամական միջոցների կամ դրանց համարժեքների ստացման կամ վճարման պահին: Գործառնությունները հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում գրանցվում ու ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերում են:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը,
- ֆոնդերի աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը,
- ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը,
- վարկային միջոցների առհանումների հաշվետվությունը,
- նպատակային հաշվի հաշվետվությունը,
- հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է:

2.2 Գործարքներ արտարժույթով

Ծրագրի հաշիվները վարվում են և գործարքները կատարվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով: ՀՀ դրամով արտահայտված գործարքները փոխարկվում են ԱՄՆ դոլարի հետևյալ կերպ:

- ՀՀ դրամով արտահայտված ՀՀ Կառավարության ներդրումները փոխարկվում են ԱՄՆ դոլարով յուրաքանչյուր փոխանցման օրվա ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով,
- ՀՀ դրամով արտահայտված ծախսերի վճարումները կապալառուներին և այլ մատակարարներին փոխարկվում են ԱՄՆ դոլարով վճարման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով,
- դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են հաշվեփակման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով,
- արտարժույթի փոխանակումից առաջացող օգուտները և վնասները ճանաչվում և ներկայացվում են ֆինանսական հաշվետվություններում զուտ գումարով որպես Փոխարժեքային տարբերություն:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 483.75 դրամ:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 483.94 դրամ:

2.3 Հարկեր

Ծրագրի գծով հարկերը և պարտադիր վճարները հաշվարկվում և վճարվում են համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության:

3. Ծրագրային ծախսերի բաշխումը ըստ ֆունդերի

Ծախսային հոդվածներ	Հաշվետու ժամանակաշրջան 2016թ.			Կուտակյալին 31.12.2016թ. դրությամբ		
	ՎՋՄԲ վարկ 8267-AM	ՀՀ Կառավարություն	Ընդամենը	ՎՋՄԲ վարկ 8267-AM	ՀՀ Կառավարություն	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
1.Ծրագրի համար նախատեսված ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական բնույթի ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր	9,247,096.17	2,311,774.03	11,558,870.20	21,525,552.51	5,381,387.96	26,906,940.47
2. Ծրագրի նախնական վճար	-	-	-	75,000.00	-	75,000.00
Ընդամենը	9,247,096.17	2,311,774.03	11,558,870.20	21,600,552.51	5,381,387.96	26,981,940.47

4. Կանխավճարներ

	31.12.2016 ԱՄՆ դոլար	31.12.2015 ԱՄՆ դոլար
Աշխատանքների գծով	1,666,472.14	1,830,428.21
Գործառնական ծախսերի գծով	1,188.80	1,976.11
Ընդամենը	1,667,660.94	1,832,404.32

4.1. Աշխատանքների գծով կանխավճարներ

ա) Շինարարական աշխատանքների գծով կանխավճարները տրվել են համաձայն շինարարական պայմանագրերի, բանկային երաշխիքի առկայությամբ, պայմանագրի գումարի մինչև 25 տոկոսը:

բ) ISEP/ICB/CW-14/001-1 (Lot 1) (կապալառու՝ FOUR DIRECTIONS LLC-Kapavor LLC ՀԶ) պայմանագրի շրջանակներում 2016թ. մարտի 23-ին տրվել է 977,898.1 ԱՄՆ դոլար գումարով կանխավճար: Պայմանագրով նախատեսված է Քաղցրաշենի ոռոգման համակարգի կառուցում: Համայնքի բնակիչների հետ տարաձայնության պատճառով մեկնարկած շինարարական աշխատանքները ընդհատվել են: Կատարվել է պայմանագրի նախագծի և գնի փոփոխություն, որը 2017թ. մարտի 24-ին համաձայնեցվել է Համաշխարհային Բանկի հետ, որի արդյունքում, համաձայն պայմանագրի թիվ 2 լրացման, նախատեսվում է շինարարական աշխատանքները վերսկսել 2017թ. ապրիլի 3-ից:

5. Կրեդիտորական պարտքեր

	31.12.2016 ԱՄՆ դոլար	31.12.2015 ԱՄՆ դոլար
Աշխատանքների գծով	340,367.81	360,121.03
Գործառնական ծախսերի գծով	178.64	830.02
Ընդամենը	340,546.45	360,951.05

6. Ֆինանսավորում

6.1 ՎԶՄԲ վարկ 8267- AM ֆինանսավորում

	Հաշվետու տարի 2016 ԱՄՆ դոլար	Առ 31.12.2016 կուտակային ԱՄՆ դոլար
Կանխավճար	-	5,000,000.00
SOE	9,602,088.90	18,956,630.68
Summary Report	241,844.81	1,652,001.37
Նախնական վճար	-	75,000.00
	9,843,933.71	25,683,632.05
Ընդամենը բյուջե		30,000,000
Առ 31.12.2016 տրամադրված ֆինանսավորում %		86%

6.2 ՀՀ Կառավարության ֆինանսավորում

	Հաշվետու տարի 2016 ԱՄՆ դոլար	Առ 31.12.2016 կուտակային ԱՄՆ դոլար
Ֆինանսավորում	1,635,412.46	5,704,574.85
	<u>1,635,412.46</u>	<u>5,704,574.85</u>
Ընդամենը բյուջե		7,500,000
Առ 31.12.2016 տրամադրված ֆինանսավորում %		76%

7. Արտարժույթի փոխարժեքային օգուտ/(վնաս)

	31.12.2016 ԱՄՆ դոլար	31.12.2015 ԱՄՆ դոլար
Կրեդիտորական պարտավորությունների վերաներկայացումներից	(74,835.87)	(80,476.18)
Դրամական միջոցների մնացորդների վերաներկայացումներից	(46,583.50)	(42,175.90)
	<u>(121,419.37)</u>	<u>(122,652.08)</u>

8. Բյուջեի կատարում

	Աճողական ծախսումներ 31 դեկտեմբեր 2016թ. դրությամբ ԱՄՆ դոլար	Ընդամենը բյուջե ԱՄՆ դոլար	Կատարում* %
Ծախսային հոդված			
1. Ծրագրի համար նախատեսված ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական բնույթի ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր	26,906,940.47	37,425,000.00	72%
2. Ծրագրի նախնական վճար	75,000.00	75,000.00	100%
Ընդամենը	26,981,940.47	37,500,000.00	72%

*Ներկայումս Համաշխարհային Բանկի հետ քննարկվում է Ծրագրի ավարտման ծամկետը մինչև 2018թ. հունիսի 30-ը երկարաձգելու վերաբերյալ հարցը:

9. Հաշվետու ամսաթվից հետո կատարված դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված 2,042,267.43 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով ծախսերի համար 16.01.2017թ. ՀԲ է ներկայացվել N 16 առհամման դիմումը, որը հաստատվել է 27.01.2017թ.:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՏԱԴՐՈՒՄ

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր
ՎՁՄԲ վարկ 8267- AM
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Կատեգորիա	Դիմում	ԾԻԳ	ՀԲ	Տարբե- րություն
1. Ծրագրի համար նախատեսված ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական բնույթի ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր	12	2,755,313.51	2,755,313.51	-
	13	2,903,340.00	2,903,340.00	-
	14	1,368,583.30	1,368,583.30	-
	15	2,816,696.90	2,816,696.90	-
Ընդամենը		9,843,933.71	9,843,933.71	